ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2024/112

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 հուլիսի 2024 թ. N 112

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝	«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամ /ՀՖՀՀ/
Գործունեության հասցեն՝	ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն, Դավիթ Անհաղթի փող.,10, մասնաշենք 1
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝	չի ունեցել

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024 թվականի հուլիսի 4-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՀՖՀՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	30 մարտի 2023 թ.
ինքնավերլուծության ներկայացում՝	04 սեպտեմբերի 2023 թ.
փորձագիտական այցի իրականացում՝	02-04 հոկտեմբերի 2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	05 մարտի 2024 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝	08 մայիսի 2024 թ.

«Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) և Ֆրանսիայի հետազոտությունների և բարձրագույն կրթության գնահատման բարձրագույն խորհուրդի (Hcéres) կողմից: Համատեղ գնահատումն իրականացրել է երկու պետությունների փորձագետներից ձևավորված խումբը: Երկու երկրների գործակալությունները պայմանավորվել են օգտագործել Hcéres-ի օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման չափանիշները և լրացնել դրանք ՈԱԱԿ չափանիշներով՝ որպես ուղեցույց: ՈԱԱԿ-ի և Hcéres-ի կողմից օգտագործվող չափանիշները բովանդակության առումով համահունչ են, և համապատասխանում են Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում կիրառելի որակի ապահովման չափորոշիչներին և ուղենիշներին (ESG): Կազմվել է մեկ փորձագիտական զեկույց:
Արտաքին գնահատման արդյունքների հիման վրա ՈԱԱԿ-ի և Hcéres-ի իրավասու մարմիններն իրենց ընթացակարգերին համապատասխան կայացրել են առանձին որոշումներ հավատարմագրման մասին:

ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով գնահատման արդյունքներով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** չափանիշները գնահատվել են անբավարար:
Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երկու անդամների փորձագիտական գնահատման վերաբերյալ եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***ՀՖՀՀ հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ՀՖՀՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը կազմված են հայկական և ֆրանսիական կողմերի պահանջներին համահունչ՝ ներգրավելով ՀՀ գործատուների և ֆրանսիական համալսարանների հետազոտող դասախոսների, ինչն ապահովում է որակյալ կրթություն, իսկ ՀՖՀՀ-ի շրջանավարտները պահանջված են աշխատաշուկայում: Միջազգային դասախոսներն ապահովում են տեսական կրթություն Եվրոպական չափանիշներին համապատասխան, իսկ գործատուների կողմից կիրառվող մեթոդները, ինչպիսիք են դեպքերի վրա հիմնված ուսուցումը և խնդիրների լուծումը, ավելի շատ առկա են մասնագիտական առարկաներում: Այնուամենայնիվ, ՄԿԾ-երում փոքր մասն է կազմում հետազոտական բաղադրիչը, այդ պատճառով ՀՖՀՀ-ի մագիստրատուրան գրավիչ չէ: Հարկ է նշել, որ անհրաժեշտություն կա մագիստրատուրայում առավել շատ ներգրավել ֆրանսիական կողմի դասախոսներին՝ հետազոտական բաղադրիչ ուժեղացման համար, ինչը կնպաստի գրավչության բարձրացմանը:

ՀՖՀՀ մասնագիտությունների կրթական ծրագրերը հիմնականում չեն պահանջում հատուկ նյութատեխնիկական ռեսուրսներ, բացի Ինֆորմատիկա մասնագիտության կրթական ծրագրից, որն իրականացվում է համապատասխան միջավայրում:
Միևնույն ժամանակ, բուհը որդեգրել է ուսանողների քանակի զգալի աճի ռազմավարություն, որը պահանջում է ինչպես մարդկային ռեսուրսների ներգրավում, որին համար պետք է մշակվի հատուկ ռազմավարություն, այնպես էլ շենքային պայմանների լավացում: Այս առումով կարևորվում են ֆրանսիական և հայաստանյան կողմերի շահակիցների ներդրումային ծրագրերը:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը

ՀՖՖՀ-ն իրականացնում է իր սահմանված նպատակները և պատրաստում է երկրի համար որակյալ և շուկային պիտանի կադրեր: Նման համակարգի կայունության ապահովման համար անհրաժեշտ է երկարաժամկետ ռազմավարական կառավարման ուժեղացում և համապատասխան քաղաքականությունների ու ընթացակարգերի ստեղծում: Ինչպես նաև կարևոր է տվյալների հավաքագրման մեխանիզմների ներդրումը, որը հնարավորություն կտա արդյունավետ որոշումների կայացնել և ռազմավարական խնդիրներ լուծել:
ՀՖՖՀ-ում որակի ապահովման համակարգը ներդրման փուլում է, դեռևս առկա է որակի ապահովման վերաբերյալ կարողությունների զարգացման կարիք: Կարիք կա ԳԱՑ-երը ներառել կառավարման համակարգ և դրանով ուժեղացնել ՌԾ իրականացման մշտադիտարկման համակարգը:

3. Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը

ՀՖՀՀ-ում միջազգայնացման գործընթացները ակտիվ են. կրկնակի դիպլոմների շնորհումը, ֆրանսիական կողմի մասնակցությունը համալսարանի ուսումնառության գործընթացներում, աջակցումը ուսանողների փոխանակման հարցում ապահովում են բուհի զարգացումը և աջակցում են ուսանողների կարիերային:
Հետազոտական կարողությունների զարգացումը դեռևս խնդիր է ՀՖՀՀ-ում. այս տեսակետից կարևոր է հետազոտող դասախոսների տեսակարար կշռի ավելացումը, որը ոլորտին համապատասխան հետազոտական կարողություններ զարգացմանը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ՀՖՀՀ-ի կողմից ներկայացված ծրագիրն իրատեսական է և ռիսկեր չի պարունակում: Իրականացման դեպքում կբերեն որակական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Հայաստանում ֆրանսիական համալսարան» հիմնադրամին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված

ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում» և «Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել հրատապ լուծում պահանջող խնդիրներին.**
   - ռազմավարության վերանայմանը՝ հաշվի առնելով բուհի ներքին և արտաքին շահակիցների կարիքները,
   - կառավարման համակարգի բարելավմանը՝ զարգացնելով ինստիտուցիոնալ կառավարման կապերը և Հոգաբարձուների խորհրդին առավել ներգրավել բուհի ռազմավարական կառավարմանը,
   - որակի ապահովման համակարգի ներդրմանը՝ կարևորելով կարողությունների զարգացումը և բուհի տարբեր ստորաբաժանումների ներգրավվածության բարձրացումը,
   - ակադեմիական հետազոտության զարգացմանը մագիստրատուրայում,
   - ներկայացնել հետազոտական բաղադրիչը ինչպես է արտացոլվելու ծրագրային ու դասընթացի մակարդակներում,
   - թերությունների վերացման պլանի կետերի համար իրատեսական ժամկետների սահմանմանը:

4. Նշված գործողություններն իրականացնել երկու տարվա ընթացքում:

5. ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով համալսարանի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ՀՖՀՀ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

2024 թ., հուլիսի 4